Ծ-98
Կտ 1945 թվ
124
37620
Ա II 23504

ԾՐԱԳԻՐ

„ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀՌՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ“ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Համալսարանների յեվ Մանկավարժական ինստիտուտների պատմական ֆակուլտետների համար

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

ՀԽՍՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 54 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 54

ԾՐԱԳԻՐ

„ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀՌՈՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ“ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Համալսարանների յեվ Մանկավարժական ինստիտուտների պատմական ֆակուլտետների համար

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1937

Խ. Ս. Հ. Մ. Ժ. Կ. Խ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԽՍՀՄ ԺԿԽ. կից բարձրագույն դպրոցների գործերի հա-
մամիութենական կոմ[redacted]

ԲԱԺԻՆ I. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հին Հունաստանի աշխարհագրական պայմանները։ Անտիկ հասարակության ժամանակագրական և յերկրային սահմանները։ Միջերկրական ծովի աշխարհագրական պայմանները—մայր ցամաք, թերակղզիներ, կղզիներ։ Պատմական միջավայրը առաջին հազարամյակում մեր թվականությունից առաջ։

Բալկանյան թերակղզին և արխիպելագը վորպես հին հունաստանի պատմական զարգացման կենտրոն։ Հունաստանի աշխարհագրական պայմանները—լեռնագրությունը, ջրագրությունը, կլիման, հողը, հյուսիս-սրևելյան միջերկրածովյան բնական հարստությունները։ Հին Հունաստանի ամենակարևոր մարդերը։ Կղզիները։ Բնակեցման պրոբլեմը։ Դասակարգային հասարակության գոյացման և զարգացման ընդհանուր ընթացքը հին Հունաստանում։ Արտադրության անտիկ ձևի բնորոշումը։

2. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Նյութական հուշարձաններ։ Հնագիտական դյուտերի պատմությունը—Ռոսսի, Շլիմանի, Դերպֆելդտի, Եվանսի և ուրիշների աշխատանքները։ Մերձսևածովյան հունական գաղութների պեղումները։ Նյութական կուլտուրայի հուշարձանների կարևորագույն հավաքածուների բնորոշումը։ Արձանագրությունները և նրանց նշանակությունը անտիկ կյանքի ուսումնասիրման գործում։ Դյուցազներգություն։ Ավանդությունների գրական մշակումներ։ Բնաբերգություն։ Դրամա։ Պատմական գիտության ծագումը հույների մոտ։

Բառառեղծված (логограф)։ Պատմաբաններ՝ Հերոդոտ, Ֆուկիդիդ, Քսենոֆոնտ, Արիստոտել, Պոլիբիոս, Դիոդոր, Պլուտարքոս, Արրիանոս։ Աշխարհագրագետներ՝ Ստրաբոն, Պավսանիոս։ Հռետորների փիլիսոփայական հեղինակություններն ու ճառերը վորպես պատմական աղբյուր։ Պապիրուսներն ու նրանց ուսումնասիրությունը։ Հունաստանի պատմության աղբյուրների հրատարակությունը։ Նույն գրողների և բնագրերի թարգմանությունները ռուսերենի։

3. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ

Հետաքրքրության առաջացումը դեպի հին Հունաստանը XVIII դարում։ Վինկելման, Վոլֆ, Միտֆորդ։ Հունաց պատմության մշակումը XIX դարի առաջին կիսում։ Նիբուրը և նրա քննական մեթոդը։ Ավգուստ Բեկը և վեմարձանագրության (епиграфика) զարգացումը։ Դ. Դրոյզի «Հունաստանի պատմությունը»։ Հին Հունաստանի պատմագրությունը XIX դարի մեջերին—Կ. Ո. Մյուլլեր, Դրոյզեն, Կուրցիուս, Բուզոլտ, Ֆյուստել-դե-Կուլանժ։ Նոր ուղղություն XIX դարի վերջում—Բելոխ, Պելման, Ե. Մեյեր։ Ռուսական գիտությունը հին Հունաստանի մասին՝ Մ. Ս. Կուտորգա, Ֆ. Ֆ. Սոկոլով, Վ. Վ. Լատիշև, Ֆ. Ի. Միշչենկո Ս. Ա. Ժեբելև, Ռ. Յու. Վիպպեր, Վ. Պ. Բուզեսկուլ, Մ. Մ. Խվոստով։ Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները անտիկ Հունաստանի մասին։ Հին Հունաստանի պատմության մշակումը խորհրդային գիտության մեջ։

4. ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

Բնակեցման պրոբլեմը հին Հունաստանում։ Արտադրողական ուժերի զարգացումը II հազարամյակում՝ մեր թվականությունից առաջ։ Այսպես կոչված յեգեյան քաղաքակրթության զարգացումը։ Յեգեյան քաղաքակրթության կենտրոններն ըստ հնագիտության տվյալների—Կրետե, Միկենա, Տերինթոս, Տրոյա, Որխոմեն, Թեսալիա։ Ճարտարապետություն, կրետա-միկենյան դարաշրջանի արվեստն ու կենցաղը։ Արխաիկ, հին Հունաստանի կապերը հին արևելքի յերկրների—Յեգիպտոսի, Փյունիկիայի, Հետտիի, Բաբելոնի հետ։ Կրետական դպրություն։ Կրե-

տեյի և Միկենի անկման պրոբլեմը։ Հունական պատժաբանների տվյալները Հելլատայի սկզբնական պատմության մասին։ Վաղեմի Հունաստանի պատմության արտացոլումն առասպելաբանության մեջ—«յերեք դար», ժողովրդների տարագրությունը, ցեղային անունների ծագումը։ Հույների ծովային արշավանքները և առասպելաբանություն։

5. ՀՈՄԵՐՈՍՅԱՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

Հոմերոսի պոեմները վորպես ժողովրդական ստեղծագործության արտադրանք։ «Իլիականը» և «Ողիսականը» վորպես պատմական աղբյուրներ և այսպես կոչված՝ Հոմերոսյան հարց։ Հույների տոհմական կարգի քայքայումն՝ ըստ «Իլիականի» և «Ողիսականի» տվյալների։ Ենգելսը հունական տոհմի քայքայման մասին։ Հոմերոսի դարաշրջանի հունական հասարակության բնութագրումը — եկոնոմիկա, գյուղատնտեսություն, արհեստ, առևտուր, դասակարգային կազմը՝ ազնվապետություն, ազատ արտադրողներ, սարուկներ։ Պետական կազմակերպության նախահիմքերը—ժողովրդական հավաք, առաջնորդներ, առաջնորդների խորհուրդ, ցեղային թագավորներ (ֆիլոբասիլեյներ)։ Հունական աշխարհածնություն (КОСМОГОНИЯ)։ Դասակարգային իդեոլոգիայի նախահիմքերը։ Ոլիմպիական պանթեոն։ Աստվածների կապը հերոսների հետ և կրոնի ոգտագործումը հոգուտ տոհմային բարձր դասի տիրապետության հաստատման։

6. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ VIII—VII ԴԱՐԵՐՈՒՄ

Հունական հասարակությունն ըստ Հեսիոդի։ Փոխանակման զարգացումը, հարստության կուտակումը և մասնավոր սեփականությունը։ Տոհմական իրավակարգի հետագա քայքայումը—ճորտություն և ազատների դասակարգային շերտավորումը։ Գյուղացիների դրությունն ըստ Հեսիոդի։ Սինոյկիզմներ և քաղաքների աճը։ Դասակարգային պայքարը քաղաքներում և հույների լայն գաղութացման սկիզբը միջերկրական ծովի ավազանում (Փոքր Ասիայի ափեր, Պրոպոնտիդա, Սև ծով, Հարավային Իտալիա, Սիցիլիա)։ Գաղութացման պրոբլեմը ժամանակակից գիտության մեջ։ Հույները և սկյութացիք։ Հունական գաղութների ընդ-

թը։ VIII—VII դարերի դաղութացման ազդեցությունը արտադրական ուժերի զարգացման վրա։ Ստրկության զարգացումը։ Համահունական սահմանումների (установление) նախահիմքերը—հասարակական խաղեր, տոնակատարություններ, պատգամախոսներ, տաճարներ, խորհրդածեսեր, կրոնական պաշտամունքներ։ Ազնվատոհմիկների (эвпатрид) հաստատվելն ուսանը Հունաստանի հասայնքների մեծամասնության մեջ։ Մանր արտադրողների դրությունը։ Հին Հունաստանի տարբեր ժարզերի զարգացման անհամաչափությունը։

7. ՍՊԱՐՏԱ

Պելոպոնեսի մարզերը, Սպարտան—Լակոնիայի կենտրոն։ Սպարտական նվաճումները Մեսենայում։ Լակեդեմոնայի ագրարային կարգը։ Հողային սեփականության բնույթը։ Սպարտական հասարակության դասակարգային բաժանումը—սպարտիատներ («հավասարներ»), պերիեկներ, իլոտներ։ Իլոտների դասակարգային պատկանելիությունը։ Դասակարգային պայքարի ձևերը Սպարտայում։ Կրիպտեաներ։ Սպարտացիների կենցաղն ու դաստիարակությունը։ Պետական կազմը—ժողովրդական հավաք, պետական խորհուրդ (герузия) և արքայական իշխանություն։ Սպարտայի քաղաքանությունը Պելոպոնեսում և զինվորական խորհրդի (симмахия) կազմվելը։ Սպարտան և նրա դերը մյուս հունական պետությունների ներքին պատմության մեջ։

8. ԱՏՏԻԿԱ VII—VI ԴԱՐԵՐՈՒՄ

Տոհմային կարգի քայքայումը Ատտիկայում։ Տոհմային հողատեր ազնվականության տիրապետության զարգացումը։ Կառավարման կազմակերպությունը—արքոնտություն (архонтат) արիոսպագոս (ареопаг), ժողովրդական հավաք։ Աթենքի նշանակության աճումը՝ վորպես արհեստա-առևտրական գործունեության կենտրոնի։ Ստրկատիրության զարգացումը։ Գյուղացիության դրության վատացումն Ատտիկայում։ «Կիլոնյան խռովությունը»։ Դրակոնի առաջին գրած որենքները։ Քաղաքական հեղափոխություն Սոլոնի ժամանակ։ Գյուղացիության պարտային ստրկության և պարտային հանձնառություն վերացումը։ Սոլոնյան

«Սահմանադրություն»։ Դասակարգային պայքար Սոլոնից հետո։ Պիզիստրատի բռնապետությունը։ Հիպպիոս և Հիպպարքոս։ Կլիսֆենեսի բարեկարգումները։ Տոհմային հարաբերությունների լուծարքը Ատտիկայում և ստրկատիրական «դեմոկրատիայի» տիրապետության սկիզբը։ Ատտիկան վորպես հունական «պոլիս»-ի նմուշ։

Բռնապետությունը վորպես հետևանք դասակարգային պայքարի այլ քաղաք-պետություններում։ Դասակարգային պայքարի արտացոլումը գրականության և արվեստի մեջ։ Հունական դպրության զարգացումը։ գիտության և փիլիսոփայության նախահիմքերը։

9. ՀՈՒՆԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՅԵՎ ԱԹԵՆԱԿԱՆ ԾՈՎԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԸ

Հունա-պարսկական պատերազմների պատճառները։ Դարեհ I-ի սկյութական արշավանքը։ Փոքրասիական հույների ապստամբությունը, այդ ապստամբության հետևանքները։ Պարսկական առաջին արշավանքները Հունաստանի դեմ։ Մարաթոնյան ճակատամարտը։ Կուսակցությունների պայքարն Աթենքում (Արիստիդես և Թեմիստոկլես) և զինվորական մեծ նավատորմի ստեղծումը։ Քսերքսեսի արշավանքը։ Պատերազմի գլխավոր փուլերը։ Պարսիկների հաղթվելը և դրա պատճառները։

Պատերազմների հետևանքները—փոքրասիական քաղաքների ազատագրումը և առաջին աթենական ծովային միության կազմվելը։ Եգիպտոսի ապստամբությունը պարսիկների դեմ և հույների անհաջող ոգնությունը նրան։ Աթենական ծովային դաշինքի փոխարկումն «աթենական պետության»։ Կիմոնի քաղաքականությունը։ Աթենական պետության կազմակերպվելը։

Հույները և Սիցիլիան։ Սիրակուսայի բարձրանալը։ Զինվորական ընդհարում Կարթագենի և Եորուսկների հետ։ Սիցիլիական բռնապետները և նրանց ներքին քաղաքականությունը։

10. ՊԵՐԻԿԼԵՍԸ ՅԵՎ ԱԹԵՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Դեմոկրատիայի աճումը հույների պարսիկներին հաղթելուց հետո։ Քաղաքական կուսակցություններն Աթենքում և նրանց սոցիալական բազան։ Ստրատիրական դեմոկրատիայի

հաղթանակը։ Եֆիալտեսի և Պերիկլեսի բարենորոգումները։ Աթենական պետության սահմանադրությունը V դարի միջին թվերին։ Պերիկլեսը և նրա գործունեությունը։ Շինարարությունն Աթենքում։ Հունական հարտարապետությունը։ Առևտուրը և Աթենքի միջնորդային գործառնությունները։ Պիրեյ նավահանգիստը։ Հակասությունների աճելը պոլիսի ներսում։ Պերիկլեսի գեղարվեստական քաղաքականությունը։ Հունական դրամայի ծաղկման շրջանը։ Արիստոֆանի քաղաքական կատակերգությունը։ Հունական փիլիսոփայությունն ու գիտությունը։ Սոփեստները։ Դեմոկրատիայի հակառակորդների յելույթը գրականության մեջ։ Կեղծ-Քսենոֆոնտյան պոլիտեա։ Աթենական պետության ճգնաժամի սկիզբը։

11. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵԿՈՆՈՄԻԿԱՆ V—IV ԴԱՐԵՐՈՒՄ

Ստրկական ձևի արտադրության զարգացումը՝ վորպես հունական պետությունների տնտեսական գործունեության հիմքի։ Ստրկությունը գյուղատնտեսության և արհեստների մեջ։ Շուկաներ և ստրուկների քանակը։

Հունական առևտուրը։ Դրամական տնտեսության զարգացումը և վաշխառություն։ Հունաստանի և գաղութային ծայրամասերի իրարից փոխադարձաբար կախված լինելը։ Ստրկական աշխատանքը հանքերում։ Տեխնիկան և ստրկական արդյունաբերության կազմակերպչական ձևերը։ Ստրուկների իրավաբանական և կենցաղային դրությունը։ Ստրկությունից ազատ արձակվածներ։ Մանր արտադրողների դրությունը։

Անտիկ հասարակության հիմնական հակասությունը և ստրուկների դասակարգային պայքարի ձևերը։ Ստրուկների ապստամբությունը Պելոպոնեսում, Ատտիկայում և Ժոսում։ Հակասություններ ստրկատիրական դասակարգի ներսում։ Անտիկ տնտեսության բնական բնույթը։ Արդիականացրած հայացքների քննադատությունը պատմագրության և ցիկլիզմի տեսության մեջ։

12. ՊԵԼՈՊՈՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պելոպոնեսյան պատերազմի առաջացման տնտեսական և քաղաքական պատճառները։ Պատերազմի առաջին փուլը։ Պերիկլեսի անկումը։ Կլեոն։ Պատերազմական գործողությունների փո-

խաղրումը ծովի վրա։ Աթենքի քաղաքականությունը «դաշնակից-ների» (Միտիլենի, Կորկիրի) նկատմամբ։ Կլեոնի մահը։ Նիկիասը և հաշտության կուսակցությունն Աթենքում։ Նիկիական հաշտությունը։ Ալքիպիադես։ Սիցիլյան արշավախումբը։ Դեկելյան պատերազմ։ Սարուկների փախուստն Աթենքից։ Ոլիգարխիական Գետերիաներն (гетерия) Աթենքում։ 411 թվականի հեղաշրջումը։ Ֆերամենի սահմանադրությունը։ Դեմոկրատիայի վերականգնումը։ Աթենքի վերջին հաջողությունները։ Պարսկաստանի միջամտելը պատերազմին։ Աթենքի պարտվելը և «30»-ի բռնակալության սահմանումը։ Ջավավորականների պայքարը դեմոկրատիայի համար և 403 թ. սահմանադրությունը։

13. ՀՈՒՆԱՍՏԱՆԸ IV ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ

Պատերազմի հետևանքով հակասությունների սրումը։ Տնտեսական ճգնաժամ հունաստանում։ Մանր արտադրողների պրոլետարացումը և վարձկանության զարգացումը։ Անտիկ դեմոկրատիայի քայքայումը։ Սպարտայի գերակշռումը։ Ագեսիլայի արշավախումբը դեպի պարսկաստան։ Կորնթոսի պատերազմը։ Անտալկիդյան հաշտություն։ Աթենքի ծովային դաշինքը։ Թեբեյի բարձրացումն ու անկումը։ (Եպամինոնտ և Պելոպիդես)։ Հունական ուշ ժամանակյա բռնապետությունն արևմուտքում։ Դիոնիսիոսի սիցիլիական պետությունը։

Ճգնաժամի արտացոլումը իդեոլոգիայի մեջ։ Սոկրատեսը և նրա գործունեությունը։ Պլատոնը և նրա ուտոպիաները— «Պոլիտիա» և «Որենքներ»։ Արիստոտելը և նրա տեսությունները պետական կյանքի մասին։ Մենանդրի կենցաղային կատակերգությունը։ Հունական գիտությունները։

14. ՀՈՒՆԱՍՏԱՆ ՅԵՎ ՄԱԿԵԴՈՆԻԱ

Մակեդոնիան և նրա ազգաբնակությունը։ Մակեդոնիայի համառոտ պատմությունը մինչև Փիլիպոս II-ը։ Փիլիպոսի վերանորոգումները և պայքար Հունաստանում գերիշխանություն ստեղծելու համար։ Մակեդոնական և հակա-մակեդոնական կուսակցությունների պայքարն Աթենքում.—Իսոկրատ, Եսխինես, Փոկիոն, Դեմոսթան։ «Սրբազան պատերազմ» և Փիլիպոսի ներթա-

փանցումը Միջին Հունաստան։ Խերոնեյան ճակատամարտ։ Պանհելլենական կոնգրես Կորնթոսում։ Փիլիպոսի մահը, Ալեքսանդրի գահ բարձրանալը և հակամակեդոնական շարժման, ճնշումը Հունաստանում։ Հունական դյուտարարական արվեստը, վորպես դասակարգային պայքարի արտացոլում V—IV դարերում—Միրոն, Պոլիկլետ, Ֆիդիաս, Սկոպաս, Պրակսիտել, Լիսիպ։ Հունական նկարչությունը և գեղարվեստական արդյունաբերությունը։

15. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Արևելքի հունա-մակեդոնական նվաճումը։ Պարսկաստանի ներքին դրությունը։ Ալեքսանդրի արշավանքների հիմնական փուլերը։ Հունա-մակեդոնական ոսպոզիցիան Ալեքսանդրի բանակում։ Արշավանք դեպի Հնդկաստան և բանակի դրությունը։ Ալեքսանդրի ներքին քաղաքականությունը։ Ալեքսանդրի մահը։ Կուսակցությունների պայքարը Բաբելոնում և կուսակցությունն առաջին բաշխումն Ալեքսանդրի զորապետների մեջ։ Զորապետների և եպիգոնների կռիվը։ Ճակատամարտ Իպսի մոտ և Ալեքսանդրի միապետության բաժանումը յերեք թագավորությունների։

16. ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պտղոմեական Յեգիպտոս։ Յեգիպտոսի ագրարային կազմը։ Արդյունաբերությունը։ Պետական մենաշնորհումներ։ Յեգիպտոսի արտաքին առևտուրը III—I դարերում։ Ալեքսանդրիայի առևտրա-արդյունաբերական նշանակությունը։ Պտղոմեսի փորձը՝ Յեգիպտոսից դուրս հողեր ձեռք գցելու։ Տեղական ազգաբնակության շարժումը հույների և մակեդոնացիների դեմ։ Դասակարգային պայքար հելլենական Յեգիպտոսում և նրա ձևերը։

Սելևկիացիների միապետությունը։ Նրա տարբերությունը պտղոմեական Յեգիպտոսից։ Արևելքի հունական գաղութացումը։ Ագրարային հարաբերություններն Ասիայում։ Ներքին և արտաքին առևտուր։ Պատերազմներ և Սելևկյանների միապետության թուլացումը։ Ստեղծումն նոր պետությունների—Հռոդոս, Պերգամ և այլն։

17. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՀԵԼԼԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Տնտեսական ճգնաժամի խորացումն ու դասակարգային հակասությունների սրումը Բալկանյան թերակղզում։ Պայքար Հունաստանի համար հելլենական միապետությունների մեջ։ Խոշոր հունական պետությունների անկումը III դարում։ Սարուկների ապստամբությունը Ատտիկայում և Բիոսում (Դրիմակ)։ Ագրարային շարժում Սպարտայում։ Ալիսի և Կլեոմենի բարենորոգումները։ Նաբիսի բռնապետությունը։ Ուշ հունական դաշինքները— Ախեյական և Եթոլիական։ Հռոմի միջամտելը հունա-մակեդոնական գործերին և Մակեդոնիայի ու Հունաստանի նվաճումը։

Արևմտյան Հունաստանը III դարում։ Ագաթոկլեսի Սիցիլիական թագավորությունը։ Հունական պոլիսների անկումն Իտալիայում և Սիցիլիայում ու նրանց նվաճվելը Հռոմի կողմից։

18. ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Արևելքի ազդեցությունը հունական քաղաքակրթության վրա։ Գիտության բաժանումը փիլիսոփայությունից։ Դրական գիտելիքների—մաթեմատիկայի, ֆիզիկայի, մեխանիկայի, աստղաբաշխության, աշխարհագրության աճը։ Եկլիդ, Արքիմեդ, Երատոսֆեն, Հիպպարխ, Հերոն։ Տեխնիկայի (մանավանդ զինվորական և շինարարական) աճը։ Բժշկականություն, բուսաբանություն, կենդանաբանություն։ Ալեքսանդրյան «Մուսեյոն» մատենադարանը։ Հելլենական լեզվաբանություն, գեղարվեստական գրականություն և փիլիսոփայություն։ Կրոնական սինկրետիզմ։ Հելլենական պլաստիկ արվեստներ՝ ալեքսանդրյան, հոդոսյան, պերգամյան, սիկիոնյան և այլ դպրոցները։

19. ՀՈՒՆԱԿԱՆ ՄԵՐՁՍԵՎԹՈՎՅԱՆ ՔԱՂԱՔՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հյուսիսային և արևելյան Սևծովյան հունական գաղութների կազմակերպման պատմությունը։ Հույները և սկյութացիք։ Սկյութական պետությունների կազմվելը։ Նյութական կուլտուրայի հուշարձանները և պեղումների հայտաբերած արձանագրու-

թյունները ԽՍՀՄ-ում տարածում։ Բոսֆորյան թագավորությունը և նրա համառոտ պատմությունը։ Սպարտակիադներ և Պերիսադներ։ Սարուկների ապստամբությունը II դարում՝ մեր թվականությունից առաջ։ Միհրդատ Պոնտացի և բոսֆորյան թագավորության անկումը։ Հռոմայեցիների արշավախումբը դեպի Սև ծով և հունական գաղութների նվաճվելը հռոմայեցիների կողմից։ Հունական քաղաքակրթությունը և նրա ազդեցությունը ԽՍՀՄ-ի ժողովուրդների քաղաքակրթության վրա։

ԲԱԺԻՆ II. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀՌՈՄԻ

1. ՀՌՈՄԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Պատմագրությունը դասակարգային պայքարի պատմության կապակցությամբ։ Հետաքրքրության արթնացում դեպի անտիկ աշխարհը՝ Վերածնության դարում։ Հռոմի պատմագրությունը լուսավորության դարում (Մոնտեսկյո, Գիբբոն, Բոֆոր)։ Գիտության զարգացումն ըստ հին Հռոմի XIX դարում (Նիբուր, Հեգել, Մոմզեն,, Ֆյուստել դե Կուլյանժ)։ Իմպերիալիզմի դարաշրջանի պատմագրությունը—Կ. Բյուխեր, Ե.Մեյեր, Պելման, Սալվիոլի, Ֆերերո, Մ. Վեբեր և ուրիշները։ Նրանց պատմական կոնցեպցիաները հին Հռոմի զարգացման և անկման մասին։ Հռոմեական պատմագրության զարգացումը Ռուսաստանում։ Ռուսաց լեզվով լեղած աշխատություններ Հռոմի մասին։ Հին Հռոմի պատմության մարքսիստական մշակումը։

2. ՀԻՆ ՀՌՈՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հռոմեական պատմության աղբյուրների տեսակները։ Իրական հուշարձաններ, արձանագրություններ, դրամներ, գրավոր աղբյուրներ։ Համեմատական-աղգագրական և լեզվաբանական տվյալներ։

Հռոմայեցիների պատմության առաջացումը։ Տարեգիրներ։ Հռոմեական պատմագրողներ։ Պատմաբաններ՝ Ֆաբիոս Պիկտոր, Պոլիբիոս, Դիոդոր, Սալլյուստիոս, Լիբիոս, Դիոնիսիոս։ Ցիցերոնի տվյալները։ Պլուտարքոս և հռոմեական գործիչների մասին, նրա տված կենսագրությունը։ Ապիանը, Տակիտոսը, Սվետոնիոս

ոը, Դիոն Կասիոսը, Կատոնը, Վարրոնը, Կոլումելլան և Պալադիոսը գյուղատնտեսության մասին։ Վիտրուվիոսը, Ֆրոնտինը, Պլինիոսը և Վեգեցիոսը հռոմեական տեխնիկայի և շինարարական արվեստի մասին։ Ուշժամանակյա հռոմեական պատմագրաններ՝ Ամմիան Մարցելլին, Որոզիոս, Յեվտրոպիոս, Պրոկոպիոս, Յեվսեբիոս։ Իրավաբանական հուշարձաններ։ Քրիստոնեական գրականությունը վորպես աղբյուր։ Հռոմեական գեղարվեստական գրականության պատմական տվյալները։ Հնագիտության, եպիգրաֆիկայի և պապիրուսագիտության տվյալները։

3. ԻՏԱԼԱԿԱՆ ՅԵՐԿԻՐԸ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Իտալիան և միջերկրածովյան աշխարհագրական սիստեմը։ Հողը և կլիման։ Ծովը և կղզիները։ Ծովափնյա գծի բնույթը և տարբերությունը հունաստանից։ Իտալիայի հիմնական շրջանները։ Ազգաբնակության պրոբլեմը։ Իտալիայի ազգացեղական կազմի խայտաբղետությունը։ Հունական գաղութացումը։ Ետրուսկական պրոբլեմը։ Ն. Յա. Մարրի տեսությունն այդ հարցի մասին։ Ետրուսկները վորպես Իտալիայի հնագույն շերտ։ Լատինները և Իտալացիք։

4. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՂԵՄԻ ՇՐՋԱՆԸ. ՊԱՏՐԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՊԼԵԲԵՅՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ

Հռոմեական պատմական հնավանդության բնույթը։ Հռոմեական համայնքի ձևակերպվելը։ Ետրուսկական ժամանակաշրջանն Իտալիայի պատմության մեջ։ Թագավորական ժամանակաշրջան։ Սոցիալական կարգ—պատրիկներ և պլեբեյներ, խնամակալներ և կլիենտներ, ստրուկներ։ Պատրիկների և պլեբեյների մեջ եղած հակասությունների սրումը։ Ամբոխի շերտավորումը։ Պարտային իրավունք և պայքար հողի համար։ Այսպես կոչված՝ Սերվիոս Տուլլիոսի ռեֆորմների խնդիրը։ Տրիբունության հիմնումը։ Տասներկու աղյուսակների որենսդրությունը։ Պլեբեյների քաղաքական իրավունքներ նվաճելը (մինչև Գորտենզիոսի որենքը 287 թ.)։

5. ՎԱՂ—ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ԸՆԴԱՐՁԱԿՎԵԼԸ.

Բարձր ազնվականության (нобилитет) հիմնվելը և հռոմեական հասարակապետության սահմանադրությունը։ Սովորական և արտակարգ մագիստրատներ։ Սենատ։ Հրապարակական ժողովներ (комиция)։ Իտալիայի նվաճումները։ Պատերազմ Եթրուսկների հետ։ Գալլերի արշավանքը։ Լացիումի հնազանդվելը։ Սամնիտական պատերազմները։ Պայքար հարավային Իտալիայի համար։ Պատերազմներ Պյուրոսի հետ։ Հռոմեական բանակը և նրա կազմը։ Իտալիայի կազմակերպումը Հռոմի իշխանության տակ։ Գաղութներ, ինքնուրույն քաղաքներ, հավայնքներ՝ առանց քվեարկելու իրավունքի, լատինական գաղութներ, դաշնակիցներ։

6. ՊՈՒՆԻԿՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ — ԱՌԱՋԻՆ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ

Կարթագեն։ Նրա տնտեսական և հասարակական-քաղաքական կազմը։ Գաղութներ։ Քաղաքակրթության բնույթը։ Հռոմի ընդհարման պատճառները Կարթագենի հետ։ Պայքար Սիցիլիայի համար։ Առաջին պունիկյան պատերազմը։ Հռոմեական զինվորական նավատորմի ստեղծվելը։ Ռեգուլի աֆրիկական արշավանքը։ Հռոմի հաղթանակը և 241 թվականի հաշտությունը։ Վարձկանների ապստամբությունը Կարթագենում։ Բարկիդներն Իսպանիայում։ Հռոմի քաղաքականությունը հյուսիսային Իտալիայում։ Գայ Ֆլամինիոսը։

Հաննիբալի քաղաքականությունն Իսպանիայում և պատրաստություն Հռոմի հետ պայքարելու։ Յերկրորդ պունիկյան պատերազմը։ Հաննիբալի արշավանքը։ Ճակատամարտեր Տիցինի և Տրեբիայի մոտ։ Գալլերի ապստամբությունը։ Դասակարգային պայքարը Հռոմում։ Ֆլամինիոս։ Ճակատամարտ Տրազիմենյան լճի մոտ։ Ֆաբիոս Մաքսիմ։ Նրա գործելակերպը և դյուդցիության, անբավականությունը։ Կաններ։ Պատերազմի հետագա ընդացքն Իտալիայում։ Պայքար Սիցիլիային և Իսպանի-

ային տիրելու համար (Սցիպիոններ)։ Դաստրուբալի արշավանքը։ Սցիպիոնի աֆրիկական արշավանքը և ճակատամարտ Զամի մոտ։ Հաշտության պայմանները։

7. ՀՌՈՄԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆ ԱՐԵՎԵԼՔ. ՅԵՐՐՈՐԴ ՊՈՒՆԻԿՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Դրությունն արևելքում։ Հռոմի քաղաքականությունն արևելքում։ Յերկրորդ մակեդոնական պատերազմ։ Հռոմի միջամտելը Հունաստանի ներքին գործերին։ Պատերազմ Անտիոքի հետ։ Պատերազմ Պերսեոսի հետ։ Մակեդոնիան հռոմեական գավառ։ Ապստամբություն Հունաստանում։ Կորնթոսի թալանը։ Յերրորդ պունիկյան պատերազմ և Կարթագենի ավերումը։ Հռոմեական պետության յերկրային սահմանները։

8. ԻՏԱԼԻԱՅԻ ԵԿՈՆՈՄԻԱՆ II ՅԵՎ I ԴԱՐԵՐՈՒՄ՝ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Նվաճումների ազդեցությունը։ Գավառային կառավարման սիստեմը։ Գավառների կողոպուտը և արժեքների հոսքն (приток) Իտալիա։ Հռոմեական վաշխառուները և կապիտալի կենտրոնացումը (публиканы)։ Փոփոխություններ Իտալիայի գյուղատնտեսության մեջ։ Գյուղացիության քայքայումը։ Հողային սեփականության կենտրոնացումը։ Խոշոր հողային տնտեսության զարգացումը։ Սարկատիրության աճը։ Հռոմեական ստրկության բնույթը և նրա տարբերությունը հունականից։ Ստրուկների իրավաբանական և կենցաղային դրությունը։ Ստրկատիրության ազդեցությունը գյուղատնտեսության վրա։ Ազատ արձակվածները և նրանց դերը Հռոմի տնտեսության մեջ։

9. ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՅԵՎ ԳՐԱԿԽՅԱՆՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Ստրուկների շարժման սկիզբը։ Պայքարի առաջին ձևերը։ Ստրուկների վաղաժամ յելույթները։ Առաջին մասսայական ապստամբությունը Սիցիլիայում։ Նրա ընթացքն ու զարգացումը։

Սիցիլիական հեղափոխության արձականգները հռոմեական պետության տարբեր տեղերում։

Արիստոնիկի ապստամբությունը Պերգամում։ Գրակխյանների շարժումը։ Տիբերիոս և նրա ագրարային օրենքի նախագիծը։ Ֆուլվիոս Ֆլակ։ Կայ Գրակխը և նրա ռեֆորմները։ Հռոմեական դեմոկրատիայի պառակտումը։ Գրակխյանների շարժման պատմական նշանակությունը։ Ագրարային օրենսդրություն գրակխյաններից հետո։ Հեղափոխության տվյալ փուլի սոցիալական նշանակությունը Հռոմի պատմության համար։

10. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ II ՅԵՎ I ԴԱՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ ՅԵՎ ՍՈՒԼԼԱՆՅԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ

Յուգուրտինյան պատերազմը։ Մերիոսի զինվորական բարեկարգումը և նրա պատմական նշանակությունը։ Պայքար կիմվրների և տևտոնների դեմ։ Սարուկների յերկրորդ սիցիլիական ապստամբությունը և նրա արձագանգներն Արևելքում։ Դեմոկրատական շարժում Հռոմում։ Ապուլեյ Սատուրնին։ Լիվիոս Դրուզ Կրտսեր։ Դաշնակիցների պատերազմը և իտալական դյուղացիության յելույթը։ Պատերազմ Միհրդատի հետ։ Պատերազմ Մարիուսի և Սուլլայի մեջ։ Առաջին սուլլանյան ռեակցիան Մարիանյան հեղաշրջումը Հռոմում և քաղաքացիական պատերազմ Իտալիայում։ Սուլլայի դիկտատուրան վորպես ստրկատերերի իշխանության կենտրոնացման ձև՝ հեղափոխության դեմ։

11. ՍՊԱՐՏԱԿՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՍԱՐԻ ՅԵԼՈՒՅԹԸ

Սոցիալական պայքարի սրումը։ Ստրկատիրական դեմոկրատիայի ճգնաժամը։ Յելույթ նրա դեմ։ Գլադիատորների ապստամբությունը՝ Սպարտակի գլխավորությամբ։ Ապստամբության ընթացքը։ Տարաձայնություններ ապստամբների մեջ։ Կրասոս և Պոմպեոս։ Սպարտակի անկումը և սպարտակյանների հետագա պայքարը Իտալիայի հարավում։ Պայքար Հռոմում՝ իշ-

խանության համար։ Նախասուլլանյան սահմանադրության վերահաստատումը։ Պայքար ծովահենների դեմ։ Պոմպեոսն Արևելքում։ Առաջին դավադրությունը հասարակապետության դեմ (65 թ.)։ Սերվիլիոս Ռուլլի ագրարային որինագիծը։ Կատիլինան և նրա յելույթը հասարակապետության դեմ։ Կատիլինայի դավադրությունը և Ցիցերոնը։ Կատիլինյանների շարժման բնույթը։ Կեսարի յելույթը և նրա քաղաքականությունը 60-ական թվականներին։

23504

12. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԸ. ՊԱՅՔԱՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ

Առաջին յեռապետությունը։ Կեսարը նվաճում է Գալիան։ Կրասոսն արևելքում։ Առաջին յեռապետության բաժան-բաժան լինելը։ Պայքար Կեսարի և Պոմպեոսի միջև։ Կեսարի դիկտատուրան։ Նրա բարեկարգումները։ Կեսարի մահը։ Պայքար իշխանության համար նրա մահից հետո։

Յերկրորդ յեռապետությունը։ Տարագրում (проскрипция)։ Ճակատամարտ Փիլիպոսների մոտ։ Իշխանության բաժանումը։ Ագրարային հարցն Իտալիայում։ Պայքար Սեկստ Պոմպեոսի դեմ։ Անտոնիոսի քաղաքականությունը արևելքում։ Պայքար Ոկտավիանոսի և Անտոնիոսի միջև։ Ճակատամարտ Ակցիումի մոտ։ Յեգիպտոսի միացումը։ Հռոմեական հասարակապետության անկման սոցիալական պատճառները և զինվորական դիկտատուրա սահմանելը։

13. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ետրուսկական և վաղ-հունական ազդեցություններ։ Հնագույն հռոմեական կրոնը և նրա հելլենացումը։ Հռոմեական գրականության սաղմնավորումը (Ենեոս, Անդրոնիկոս, Նիբիոս)։ Հռոմեական կատակերգությունը և նրա ներկայացուցիչները (Պլավտոս, Տերենցիոս)։ Հռոմեական պատմական դիտությունը (Սալլյուստիոս, Դիոդոր Սիցիլիացի, Դիոնիսիոս Հալիկարնասցի, Տիտոս, Լիվիոս և այլն)։ Պերճախոսությունը և քաղաքական հրապարակախոսությունը (Ցիցերոն և այլն)։

ԳՐԱԴԱՐԱՆ

Հռոմեական կենցաղի հելլենացումը։ Սցիպիոնների խմբակը։ Հասարակապետության անկման շրջանի հռոմեական տեսաբանությունը։ Հռոմեական փիլիսոփայությունը և նրա ներկայացուցիչները (Լուկրեցիոս Կարը)։

14. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ—I-Դ. ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԾԱՅՐԱՄԱՍՈՒՄ

Հռոմեական կայսրությունը վորպես ստրկատերերի զինվորական դիկտատուրա։ Պրինցիպատը վորպես նրա սպեցիֆիկ ձև։ Ոգոստոս, նրա ֆինանսական, սոցիալական, վարչական և զինվորական քաղաքականությունը։ Հռոմեական քաղաքակրթությունն Ոգոստոսի ժամանակ։ Գրականությունը և շինարարական արվեստը (Վիրգիլիոս, Հորացիոս, Ովիդիոս, Վիտրուվիոս)։

Տիբերիոս, Կալիգուլա, Կլավդիոս։ Ստրուկների հուզումները։ Հասարակապետական ոպոզիցիան և ահաբեկչական ռեժիմի զորացումը։ Պրետորիանները և ապարատի բյուրոկրատացումը։ Ազատ արձակվածներ, նրանց նշանակությունը. Ներոն։ Հեղափոխական և դիմադրական տրամադրությունների աճումը։ Ապստամբություն գավառներում։ Քաղաքացիական պատերազմ 68—69 թվականներին։ Հարկման աճը։ Ֆլավիոս։ Ցիվիլիսի ապստամբությունը։ Հրեական ապստամբություն։ Դոմիցիան և նրա միահեծանության ձգտելը։ Պայքար Սենատի դեմ։

15. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ II-Դ.

Տրայանոս։ Իտալական հողատիրությունն ամրապնդելու փորձեր։ Պետական բարեգործության աճը։ Տրայանոսի արտաքին քաղաքականությունը։ Կայսրությունն ընդարձակելու ամենաբարձր կետը։ Բյուրոկրատացում Ադրիանոսի ժամանակ։ Բար—Կոխբի ապստամբությունը Հրեաստանում։ Անտոնին Պիոս և Մարկոս Ավրելիոս։ Կայսրության ներքին և արտաքին դրության վատթարացումը Մարկոս Ավրելիոսի ժամանակ։ Ապստամբություն գավառներում։ Ճնշում կայսրության սահմանների վրա։ Կոմմոդը և նրա արտաքին քաղաքականությունը։ Միահեծանական տրամադրությունների զորացումը։ Անտոնինների տոհմի վերջը։

Հռոմեական գավառները II դարում։ Արևելյան գավառները։ Առևտրի զարգացումը։ Արտաքին առևտուրը (Չինաստանի և Հնդկաստանի հետ)։ Արևմտյան գավառները։ Քաղաքների աճը։ Քաղաքային կառավարչություն,—դեկուրիոններ և քաղաքային մագիստրատներ։ Պետական վերահսկողություն քաղաքային ֆինանսների վրա։ Գավառական և քաղաքային շարժումներ։ Խոշոր և մանր հողատիրություն Անտոնիններ ի ժամանակաշրջանում։ Կոլոնատի առաջացումը և նրա զարգացումը։ Կոլոնները մասնավոր և կայսերական կալվածներում։ Գերմանացիներին բնակեցնելը կայսրության ծայրամասերում։

16. ՃԳՆԱԺԱՄ III ԴԱՐՈՒՄ

Քաղաքացիական պատերազմ և Սևերների տոհմը։ Իշխանության ապարատի զինվորականացումն ու բյուրոկրատացումը։ Խոշոր հողատիրության աճը։ Կոլոնատի զարգացումը։ Հարկերի ճնշումը։ Ժողովրդական մասսաների աղքատացումը։ Արհեստների, առևտրի անկումը, ֆինանսական ճգնաժամ։ Սենատի իշխանության թուլացումը։ Կարակալլայի հրովարտակը 312 թ.։ Սենատական ռեակցիա Ալեքսանդր Սևերի ժամանակ և նրա խորտակումը։

Յերրորդ դարի զինվոր կայսրեր։ Մակսիմինոսի տնաբնակիչ ռեժիմը։ Քաղաքային ներքնախավերի և գյուղական ազգաբնակության անբավականությունը։ Գորդիաններ ի շարժումը (238)։ «Սենատորական» կայսրեր։ Բարբարոսներ ի—պարսիկներ ի, գոթերի, ալիմաններ ի ներխուժումը։ Կենտրոնական իշխանության անկումը։ Կայսրության հողի վրա ինքնուրույն պետությունների կազմվելը։ Գյուղացիներ ի, ստրուկներ ի և քաղաքային արհեստավորներ ի շարժումը—դրամահատներ ի ապստամբությունը Հռոմում։ Բագաուդներ ի (գալլական գյուղացիներ ի—Ծ. Թ.) շարժման սկիզբը։ Մոտալուտ հեղափոխության ճնշման և կայսրությունը վերականգնելու փորձ՝ Ավրելիանոսի և Պրոբոսի ժամանակ։

17. ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԾԱԳՈՒՄԸ

Քրիստոնեյությունը վորպես ճորտատիրական հասարակության անկման կրոն։ Քրիստոնեյության առաջացման պրոբլեմը։ Քրիստոնեյության մասին յեղած բոլոր աղբյուրների առասպելական կամ կեղծ բնույթը-1-ը։ Քրիստոնեյությունը վորպես սինկրետիկ կրոն։ Հրեյությունը, արևելյան կրոնները, ժողովրդական հավատալիքները, փիլիսոփայությունը (ստոյիցիզմ և նեոպլատոնիզմ) վորպես քրիստոնեյության բաղկացուցիչ տարրեր։ II դարի համայնքների տարաժամն շրջանները։ Յեպիսկոպոսական թեմերի դերը և նրանց կազմակերպությունը։ Յեկեղեցական վերնախավի և ներքնախավերի մեջ յեղած պայքարի սկիզբը (հերձված)։ Յեկեղեցու պայքարը կառավարության դեմ և այսպես կոչված՝ «հալածանքներ»։

18. ՈՒՇ ԺԱՄԱՆԱԿՅԱ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

Դիոկղետիանոս և հեղափոխության ժամանակավոր ճնշումը։ Պետության նոր ձև (Դոմինատ)։ Կայսրության բաժանումը։ Դիոկղետիանոսի բարեփոխումները—հրաման դների մասին, ֆինանսական բարեփոխություն, հարկային բարեփոխություն։ Բյուրոկրատիայի դերն ուշժամանակյա կայսրության ժամանակաշրջանում։ Դիոկղետիանոսի կրոնական քաղաքականությունը։ Հռոմեական սահմանների ամրացումը։ Հռոմեական բանակի վայրագացումը։ Պայքար իշխանության համար՝ Դիոկղետիանոսի հաջորդների մեջ։ Կոնստանդիանոս։ Նրա դաշինքը քրիստոնեական յեկեղեցու հետ։ Միլանյան հրամանագիր։ Դոմինատի սիստեմի ավարտումը։ Մայրաքաղաքի տեղափոխումն արևելք։ Յեկեղեցին վորպես պետական ապարատի մի մասը։ Հերձվածների զարգացումը վորպես հեղափոխական շարժման ձևի։ Ագոնիստիկների շարժման սկիզբը։ Արիոսականություն։ Նիկիական ժողով։ Հեթանոսությունը։ Վերականգնելու փորձերը Հուլիանոսի ժամանակ։

19. ԵԿՈՆՈՄԻԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՇԺԱՄԱՆԱԿՅԱ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Սարկատիրական լատիֆունդիայի կործանումը և նոր ձևի խոշոր կալվածքի կազմվելը։ Կոլոնատի հետագա զարգացումը։ Կոլոնների ճորտացումը։ Պետությունների միջամտությունը տնտեսական կյանքին։ Պարտադիր մատակարարման սիստեմ. Կոլեգիաններին ծառայագրումը։ Պետական խոշոր արհեստանոցների կազմակերպումը՝ պարտադիր աշխատանքով։ Կուրիալների ճորտացումը։ Դրամների անարժեքացումը։ Առևտրի անկումը։ Հարկերի բնավճարացումը։ Դոմինատը վորպես հողատերերի դիկտատուրա։

20. ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՈՒ ԿՈԼՈՆՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ։ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Գոթերը և Հունները։ Վեստգոթերի ընակեցումը Բալկանյան թերակղզում։

Վեստգոթերի ապստամբությունը։ Բալկանյան թերակղզու ավերումը և Վալենտի կործանումը։ Ապստամբություններ հռոմեական կայսրության զանազան մասերում։ Բագաուդների ապստամբությունը Գալլիայում և Իսպանիայում, իսկ ագոնիստիկներինը՝ Հռոմեական Աֆրիկայում։ Թեոդոս և կայսրության վերջին միավորումը։ Կայսրության վերջնական բաժանումը՝ արևելյանի և արևմտյանի Թեոդոսի մահից հետո։ Վեստգոթերի նոր ապստամբությունը Ալարիխի առաջնորդությամբ։ Վեստգոթերի և ստրուկների միացումը հռոմեական կայսրության դեմ։ Ալարիխը վերցնում է Հռոմը։ Հունների արշավանքը։ Ատիլլա։ Հռոմի կողոպտվելը վանդալների ձեռքով։ Բարբարոսական պետությունների կազմվելը Արևմտյան կայսրության հողամասում։ Հռոմեական վերջին կայսր Հռոմուլ Աուգուստուլը։ Արևմտահռոմեական կայսրության անկումը։ Արևելա-հռոմեական կայսրության վիճակը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առաջին բաժնի համար. Հին Հունաստանի պատմությունը

ՀԻՄՆԱԿԱՆ

ՄԱՐՔՍ ՅԵՎ ԵՆԳԵԼՍ—Անտիկության մասին. Ժող. Ս. Ի. Կովալյովի խմբ. 1932 թ.

ԵՆԳԵԼՍ—Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը։

ԼԵՆԻՆ—Դասախոս. պետության մասին. հեղ. և հ. XXIV.

ՍԵՐԳԵՅԵՎ—Հին Հունաստանի պատմությունը. 1934 թ. Սոցեկգիզ։

ԿՈՎԱԼՅՈՎ—Անտիկ հասարակության պատմությունը հ. I. «Հունաստան» Սոցեկգիզ. 1937 թ.

ՍՏՐՈՒՎԵ—Քրեստոմատիա հին պատմության. հ. I. 1936 թ.

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ—հ. II. Հին Հունաստան, գլ. V. VII.

ԼՐԱՑՈՒՑԻՉ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ—Հրատ. ԳԱԻՄԿ. հ. II. մասն I. և II. «Հունաստան» (ամբողջը)։

ՎԻՊՊԵՐ—Հունաստանի պատմություն կլասիկ ժամանակաշրջանում։

ՊԵԼՄԱՆ—Ուրվագիծ հունական պատմության և աղբյուրագիտության։

ԲԵԼՈԽ—Պատմություն Հունաստանի. մ. I և II.

Ցերկրորդ բաժնի համար—պատմ. հին Հռոմի

ՀԻՄՆԱԿԱՆ

ՄԱՐՔՍ ՅԵՎ ԵՆԳԵԼՍ—Անտիկության մասին. Ժող. Կովալյովի խմբագր.

ԵՆԳԵԼՍ—Ընտանիքի, մասնավոր սեփականության ծագումը գլ. VI.

ԼԵՆԻՆ—Դասախ. պետության մասին հ. XXIV, եջ 362—377.

ՍՏԱԼԻՆ—Ճառ հարվածային կոլխոզնիկների I համագումարում։
ԿՈՎԱԼՅՈՎ—Անտիկ հասարակության պատմությունը. մ. II Հռոմ, Սոցեկգիզ. 1936 թ.
ՍՏՐՈՒՎԵ—Քրեստոմատիա հին պատմության. մ. II.

ԼՐԱՑՈՒՑԻՉ

ՍԵՐԳԵՅԵՎ—Հոդվածներ «Պատմությունը միջնակարգ դպրոցում» ամսագրում 1936 թ.։
ՄԻՇՈՒԼԻՆ—Սպարտակյան ապստամբություն. 1936 թ.։
ՄԻՇՈՒԼԻՆ—Սպարտակյան ապստամբություն և Հռոմ. կայսրության անկումը. 1936 թ.։
ՎԻՊՊԵՐ—Ուրվագիծ Հռոմ. կայսրության պատմության։
ՆԻՋԵ—Ուրվագիծ Հռոմ. պատմության և աղբյուրագիտության։

ՀԱՄՍՈ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Խմբ. Ս. ԲՈՒԴՈՒՄՑԱՆ

Սրբագրիչ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավլիտի լիազոր Կ.—8262. Պատվեր № 72 Տիրաժ 800
Հանձնված է արտադրության 13 նոյեմբերի. 1937 թ.,
Ստորագրված է տպագրելու 19 նոյեմբերի. 1937 թ.,

Ուսուցիչների Վերակավորման Ինստիտուտի տպարան,
Երևան, Մարքսի փողոց № 17

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003365

592

ԳԻՆԸ 50 կ.

074.

A II 23504